

**Հայտարարություն**  
**ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը հրապարակում է սույն**  
**հայտարարությունը փորձագետ ներգրավելու վերաբերյալ**

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ) ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գործընթացի իրականացման աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

**Աշխատանքների համառոտ նկարագիրը.**

Մարզում տեղեկատվական հոսքերի, պաշտոնական իրադարձությունների լուսաբանում, հանրության հետ կապերի ապահովում:

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:**

**Փորձագետի պարտականությունները՝** իրականացնում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառում պահանջվող աշխատանքը՝ մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում տեղեկատվության, փաստաթղթերի, այլ անհրաժեշտ նյութերի տեղադրում, իրադարձությունների լուսաբանում, մամուլի հաղորդագրությունների պատրաստում, մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկատվության հավաքում, հանրային կարծիքի ուսումնասիրություն, լրատվական դաշտում (նաև սոցիալական կայքերում) մարզի մասին տեղեկատվության մոնիտորինգ:

**Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

- ունի բարձրագույն կրթություն՝ «լրագրություն» կամ «հանրային կապեր» մասնագիտությամբ (առնվազն բակալավրի աստիճան),
- ունի լրատվության կամ հանրային կապերի ոլորտում աշխատանքային փորձ,
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Վարձատրության չափը՝ Պայմանագրային:**

**Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը,** ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

**Ընտրությունը կատարելու եղանակը՝** դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

**Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).**

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ) կամ մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային փոստի միջոցով՝ [syunik.anznakazm@mail.ru](mailto:syunik.anznakazm@mail.ru)

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ (0285) 44275 հեռախոսահամարով:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 30.08.2023թ.:**

քաղաքացի \_\_\_\_\_ -ից  
(դիմողի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ հիմողի հասցեն

\_\_\_\_\_ Էլեկտրոնային հասցեն

\_\_\_\_\_ հեռախոսահամարը

### ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) \_\_\_\_\_ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) \_\_\_\_\_ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի \_\_\_\_\_ էջ
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) \_\_\_\_\_ էջ.
5. Այլ \_\_\_\_\_ էջ.  
Առդիր՝ \_\_\_\_\_ էջ.

Դիմող՝ \_\_\_\_\_  
ստորագրություն անուն, ազգանուն

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 202 թ.

Նախազգուշացված եմ՝ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: